*Հարց* 1.(04.20065) Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, վճարվում է հավելում

1. ժամային դրույքաչափի 30 տոկոսից ոչ պակաս չափով.
2. ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար` ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով.
3. ժամային դրույքաչափի 25 տոկոսից ոչ պակաս չափով:

Հարց 2. Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել`

1. շաբաթական 40 ժամից.
2. շաբաթական 35 ժամից.
3. շաբաթական 36 ժամից.
4. շաբաթական 38 ժամից.

Հարց 3. Պետական ոչ առևտրային կազմակերպության գտնվելու վայրը`

1. գործադիր մարմիններից որևէ մեկի գտնվելու վայրն է.
2. կազմակերպության ժամանակավոր գտնվելու վայրն է.
3. նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

Հարց 4. Պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է`

1. պետական ոչ առևտրային կազմակերպությունը.
2. հիմնադիրը.
3. դատարանը:

Հարց 5. Նշվածներից ի՞նչ կարգով է անցկացվում միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում`

1. Անվճար.
2. Վճարովի.
3. Մասնակի վճարովի: